

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի խորհրդի նիստ, հունվարի 23, 2020թ.

Ուսումնաարտադրական արհեստանոցների համատեղ օգտագործման
համաձայնագրեր

Կրթահամալիրում մշակվող և իրականացվող հեղինակային կրթական ծրագրի շահառուների քանակը գնալով մեծանում է: Ընդարձակվում է նաև աշխարհագրությունը: Կրթահամալիրի մասնաշենքերը ֆիզիկապես չեն կարողանա սպասարկել պահանջարկը: Որպես խնդրի լուծման ճանապարհներից մեկը՝ կրթահամալիրն իր ոչ պետական միջոցների հաշվին մասնաշենքերի նկուղային հարկերը մաքրում, բերում է լուսավոր, տաքացվող վիճակի, որտեղ տեղավորվում են ուսումնական արհեստանոցներ, արվեստանոցներ, լաբորատորիաներ: Կրթահամալիրը իր ոչ պետական միջոցների հաշվին կարողացել է կահավորել դրանց մի մասը, որունք արդեն օգտագործվում են:

Մայր դպրոցում

	Մակերեսը՝ քառակուսի մետր
Խեցեգործության արհեստանոցը	600
Միջին դպրոցի հանդերձարան	144
Հրաձգարան	576
Հեծանվային ակումբ	36
Ընթերցասրահ	72
Դրսի մարզադաշտերի հանդերձարան	72
Ավագ դպրոցի հանդերձարան	144
Փայտագործության արհեստանոցներ	864
Մետաղագործության արհեստանոց	72
Ծեսերի կենտրոն-լաբորատորիա	300

Հյուսիսայի դպրոց-պարտեզի շենքում

	Մակերեսը՝ քառակուսի մետր
Վիզեն Ավետիսի քանդակի դպրոց	216
Թատրոն-լաբորատորիա	216
Արտասահման լաբորատորիա	288
Ոսկերչության արվեստանոց	144
Մառան-լաբորատորիա	144
Բնագիտության լաբորատորիա	144
Երաժշտության ակումբ-լաբորատորիա	144

Արևելյան դպրոց դպրոց պարտեզի շենքում

	Մակերեսը՝ քառակուսի մետր
Տեխնոլոգիայի լաբորատորիա	144
Մառան լաբորատորիա	144
Հայրենագիտության ակումբ	144
Առայժմ չօգտագործվող	944

Արևմտյան դպրոց պարտեզի շենքում

	Մակերեսը՝ քառակուսի մետր
Տեխնոլոգիայի լաբորատորիա	144
Բնագիտության լաբորատորիա	144
Հեծանվորդների ակումբ	144
չօգտագործվող	800

Քուլեջի շենքում

	Մակերեսը՝ քառակուսի մետր
Խաղողի և գինու դպրոց	288
Հյուրատուն	288
սեղանատուն	224
Չոգտագործվող	576

Որպես ուսումնական տարածքներ՝ ձևափոխվում և օգտագործվում են մասնաշենքերի տանիքները՝ Հյուսիսային դպրոց պարտեզում $4 \times 144 = 576$ քառակուսի մետր, որպես բացօթյա ուսումնական տարածքներ, Մայր դպրոցում ջերմոց-լաբորատորիա 72 քառակուսի մետր, Քուլեջում Վերնատուն 576 քառակուսի մետր, հիդրոպոնիկայի լաբորատորիա 30 քառակուսի մետր:

ՊՈԱԿ-ը օրենքով և կառավարության հաստատած կարգով կարող է իր օգտագործմանը անհատույց տրամադրված գույքը մինչև մեկ տարի ժամկետով տալ վարձակալության, երբ վճարի դիմաց գույքի ժամանակավոր տիրապետումը փոխանցվում է ուրիշի:

Կրթահամալիրը 2018 թվականից լրիվ հրաժարվել է իր ունեցած տարածքները վարձակալությամբ տալու պրակտիկայից: Փոխարենը փորձում է գտնել օրենքով չարգելված ձևեր՝ իր կանոնադրական խնդիրներն իրականացնելու համար:

«Քաղաքացիական օրենսգրքի 1026 հոդվածը սահմանում է «համատեղ գործունեության պայմանագիր» հասկացությունը. **«Համատեղ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար»:**

Օրենսդրություն 1027 հոդվածով որոշվում են ներդրվող ավանդները **«Մասնակցի ավանդ է համարվում այն ամենը, ինչ նա ներդնում է ընդհանուր գործում՝ ներառյալ դրամը, այլ գույքը, մասնագիտական և այլ գիտելիքները,**

ունակություններն ու հմտությունները, ինչպես նաև գործարար համբավը և գործարար կապերը»:

Կրթահամալիրը դեռ 2015թվականից այդպիսի համատեղ գործունեություն է իրականացնում «Հայկական ցատկացանցերի ֆեդերացիա» ՀԿ-ի հետ: Ստեղծվել էր իրավիճակ, երբ կրթահամալիրը մայր դպրոցի շենքում ուներ մոտ 400մ² մակերես և 6մ բարձրություն ունեցող դատարկ դահլիճ, իսկ կահավորելու համար պետական հատկացումներ չկային: ՀԿ-ն ուներ մարմնամարզական, ցատկացանցային գույք, բայց չուներ տարածք, որտեղ կարող էր ունեցած գույքն օգտագործել: Համագործակցության արդյունքում ծնվեց մարմնամարզության եզակի դահլիճ, որից օգտվում են կրթահամալիրի սովորողները, մանկավարժական աշխատողները, կրթահամալիրում կրթական փոխանակման, հանրակրթական կամուրջների նախագծերով, վերապատրաստման ծրագրով գտնվող այլ սովորողներ և մանկավարժական աշխատողներ, իսկ դասացուցակային պարապմունքներից ազատ ժամերին՝ ՀԿ-ի մանկական մարմնամարզական խմբերը: Համագործակցության արդյունքում հազարավոր երեխաներ դարձան օգտատեր: ՀԿ-ն կրթահամալիրին օգնում է մարմնամարզության մարզիչներ գտնելու հարցում, ցուցաբերում է մասնագիտական-մեթոդական օգնություն:

Համագործակցության մյուս հարթակը ուսումնաարտադրական արհեստանոցն է: Կրթահամալիրը տրամադրում է տարածք, գործընկերը՝ համապատասխան սարքավորումներ և մասնագետներ: Արհեստանոցում մասնագետներն իրականացնում են կրթահամալիրի սովորողների ուսուցում, այդ թվում՝ նախամասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով, իսկ դասավանդումից ազատ ժամերին կարող են իրականացնել արտադրական գործունեություն, որում կարող են ընդգրկվել նաև կրթահամալիրի սովորողները:

Կրթահամալիրը իր մասնաշենքերի մաքրված նախկին նկուղներում հիմա էլ ունի ազատ տարածքներ և փնտրում է գործընկեր: